«ՎՐԱՍՏԱՆԸ» 100 ՏԱՐԵԿԱՆ Է

ԻՄ ՄԵԾ ԲԱՐԵԿԱՄ «ՎՐԱՍՏԱՆԻՆ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Ցանկանում եմ շնորհավորել «Վրաստան» թերթի ողջ խմբագրակազմին, լրագրողներին, թերթի բոլոր ընթերցողներին եւ երկրպագուներին այս նշանակալից տարելիցի առիթով:

Ցանկանում եմ իմ խորին երախտագիտությունը հայտնել այն մեծ եւ շնորհակալ գործունեության համար, որը կատարում է թերթը, եւ ինչը նշանակալի նպաստում է վրաց-հայկական հարաբերությունների ամրապնդմանը մեր ժողովուրդների միջեւ համագործակցության, հարգանքի եւ բարեկամության ուժեղացմանը: Թերթին մաղթում եմ հաջողություններ, բազում ընթերցողներ եւ երկարակեցություն իրենց նշանակալից առաքելության կատարման գործում:

Հարգանքներով՝ ԻՐՄԱ ՍՈԽԱՋԵ
Վրաստանի ժողովրդական երգչուհի

ՄԵՐ ԹԵՐԹԸ ՆԱԵՎ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ Է ՄԵՐ ԾՆՈՂՆԵՐԻՑ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Ղուշչիի մեր տան թերթի սիրահարը հայրս էր՝ Խաչատուր Խումարյանը, ով աշխատում էր որպես լրագրող Ծալկայի ,«Լենինյան ուղի» շրջանային թերթի խմբագրությունում: Ինքն իր թերթն ուներ, բայց «Վրաստանը» մի առանձին սիրով էր սիրում, այնպես՝ ինչպես ավագ եղբորը կսիրեն: Հետո աշխատանքի անցավ որպես մեր շրջանի փոստի ու կապի բաժանմունքի պետ, ու «Վրաստանն» արդեն իր միջոցով եւս տարածվեց շրջանում: Հայաստանից եկող թերթերի տրցակում «Վրաստանն» անպակաս էր: Հայրս հիմա չկա: Ցավոք, չենք ստանում նաեւ Հայաստանից եկող որեւէ թերթ: Բայց «Վրաստանը» կա, ու մենք շարունակում ենք այն ստանալ՝ նրա պահպանումը պարտականություն համարելով: Մանավանդ որ, մայրս շարունակում է սպասել թերթի հերթական համարին, ու այժմ ես եմ ստանձնել «Վրաստանը» «տուն բերելու» պարտականությունը: Որքան էլ փոխվեն ժամանակներն, ու նորերը գան, հինը երբեմն կարող է առավել արժեւորվել: Ու այս պարագայում խոսքը հենց «Վրաստան» թերթի մասին է: Որքան երկար ապրի, այդքան կարժեւորվի: Ու թող օրհնվեն բոլոր նրանք, ովքեր իրենց լուման են ներդրել, ապրեցրել ու դեռ ապրեցնելու են թերթը: Այն մեր պատմությունն է, հիշողությունը, ընտանեկան գեղեցիկ ավանդույթը: Շնորհավորում եմ, սիրելի «վրաստանցիներ», շնորհավորում եմ Ձեզ՝ Վան Վաղարշակի, ում եւ նմանվել է թերթը՝ չծերացող ու հավերժ երիտասարդ: Թող ձեզ փոխարինեն նորերը, ընթերցողներիս՝ հաջորդները, որպեսզի թերթն ապրի դեռ շատ երկար ու առանց ընդհատումների:

ՍԱՄՎԵԼ ԽՈՒՄԱՐՅԱՆ
Ծալկայի մունիցիպալիտետ
գյուղ Ղուշչի

ՀԻՇԱՏԱԿ



ԱՐՄԱՏՆԵՐՈՎ ՇԱՀՈՒՄՅԱՆՅԻ, ԹԲԻԼԻՍԻ ԹԻՎ 43 ԴՊՐՈՑԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏ, ԱՇԽԱՐՀԱՀՌՉԱԿ ՍՐՏԱԲԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍԻՐՈՒՆՅԱՆ...

Օրեր առաջ տեղեկացանք, որ Երեւանում, 89 տարեկան հասակում հավերժի ճամփան բռնեց Հայաստանում ու նրա սահմաններից դուրս մեծ համբավ ունեցող անվանի բժիշկ, սրտաբան Ալեքսանդր Միքայելի Սիրունյանը:

Անժամանակ մահերի այս դառը իրականության մեջ, որքան էլ երանություն թվա ութ տասնյակից ավելի տարիների կյանքը, մարդկային կորուստը, այդուհանդերձ, տխուր ու անդառնալի է: Ու հատկապես ցավալի, երբ անկախ տարիքից, կիսատ են մնում այլեւս երկնքում ապրողների երկրում թողած ժողովրդանպաստ, հայրենանպաստ ու ազգանպաստ գործերն ու մեր դեռ չասված երախտիքի խոսքերը: Հենց այսպիսին էր բժիշկ Ալեքսանդր Սիրունյանը, ով Հիպոկրատի ու նախեւառաջ խղճի առաջ խոստմանը հավատարիմ, սիրտ ու հետեւաբար հոգի էր բուժում՝ նոր խփոց ու զարկերակ, նոր կյանք պարգեւելով նույնիսկ անհույս հիվանդին:

Ալեքսանդր Սիրունյանն արմատներով Վրաստանի Մառնեուլիի մունիցիպալիտետի Շահումյան ավանից էր, Սիրունյանների հայտնի գերդաստանից: Ծնվել էր 1932 թվականին, Քութայիսիում: Շահումյանում ծնված հայրը՝ Միխայիլ Սիրունյանը, Ադրկովկասի զինվորական օկրուգի բարձր պաշտոնյաներից էր, ծառայել էր Քութայիսիում, Թբիլիսիում, եղել Թամանյան դիվիզայի Բեռլին հասած գնդերից մեկի հրամանատարը, հետագայում՝ Հայաստանի ԴՈՍԱԱՖ նախագահի տեղակալը:

Ալեքսանդր Սիրունյանը սովորել էր Թբիլիսիի թիվ 43 դպրոցում, որն իմիջիայլոց ավարտել են Միխայիլ Թարիվերդիեւը, Բուլատ Օկուջավան: Երեւանի բժշկական ինստիտուտն ավարտելուց հետո, նա աշխատել էր Թբիլիսիի եւ Երեւանի զինվորական հոսպիտալներում: 1967 թվականից գործուղվել էր Ալժիր եւ աշխատել տեղի կենտրոնական հոսպիտալում՝ որպես սրտաբանության բաժնի վարիչ: 1974-ին Սիրունյանը գործուղվել էր Գվինեա, եղել է երկրի նախագահ Սեկու Տուրերի անձնական բժիշկը, արժանացել Գվինեայի Հանրապետության հերոսի պատվավոր կոչմանը: Կյանքի վերջին տարիներին նա Երեւանի թիվ 3 կլինիկական հիվանդանոցի գլխավոր բժշկն էր:

Սիրունյանը հիանալի եւ օրինակելի ընտանիքի, երկու որդու եւ մեկ դստեր հայր էր, երեքն էլ կայացած ու հաջողությունների հասած: Ի դեպ, դուստրը՝ Թամարան, Հայաստանի ժողովրդական կուսակցության նախագահ, Ազգային ժողովի 3-րդ եւ 5-րդ գումարումների պատգամավոր Ստեփան Կարենի Դեմիրճյանի կինն է:

...Նոյեմբերի 12-ին, երբ Երեւանում Սիրունյանի ընտանիքն ու մտերիմները նրա շիրմի մոտ կհավաքվեն մահվան քառասուն օրը հիշատակելու, այստեղ, հարազատ Շահումյանում նորից ու նորից կհպարտանան իրենց զավակով, կհիշեն հարյուրավոր մյուս շահումյանցիներին, ովքեր պատիվ են բերել ու իրենց մեծ ներդրումն ունեցել ոչ միայն այս բեղմնավոր օրրանի, այլեւ Վրաստանի, Հայաստանի եւ, ընդհանրապես, մարդկության պատմության մեջ:

Թերթելով ճանաչված հասարակական գործիչ, շահումյանցի Սանդուխտ Ասլանյանի «Շուլավեր» գիրքը՝ ուր խոսվում է նաեւ Ալեքսանդր Սիրունյանի մասին, ծանոթանում ես հայտնի գիտնականների ու ակադեմիկոսների, մանկավարժների ու գրողների եւ հատկապես բժիշկների ներկա ու անցյալ սերունդների հետ, ովքեր հենց Շահումյանում են ծնվել եւ կամ արմատներով սերտ կապված եղել այս օրհնաբեր ավանի հետ: Այսպես, Շահումյանի հող ու ջրի զավակ, հանճարեղ բանաստեղծուհի, թարգմանչուհի Մարո Մարգարյանը հայրենի եզերքի ժողովրդին ուղղված իր նամակում, գրում է.

Կարեն, Ստեփան, Լուսինե, Ռիմա, Կարինե Դեմիրճյանները, Լարիսա եւ Ալեքսանդր Սիրունյանները

«Ամենահետաքրքիրն ու թանկը ինձ համար մեր ջերմ ու արժանապատիվ ժողովուրդն էր, որ շատ տաղանդավոր զավակներ տվեց աշխարհին: Հիացմունքով ու ակնածանքով եմ հիշում Արտաշես Մելիք-Ադամյանին (ՀՀ ԳԱ ակադեմիկոս), Աբգար Իսահակյանին (խորհրդային աշխարհահռչակ մանրէաբան), Անդրանիկ Մեհրաբյանին (հոգեբույժ, նյարդաբույժ): Իսկ Վահան Միրաքյա՞նն («Լալվարի որսը» պոեմի հեղինակ, մանկավարժ) ու Արազի՞ն (արձակագիր, թարգմանիչ), Ալեքսանդր Մելիք-Փաշա՞եւը (ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, Մոսկվայի մեծ թատրոնի գլխավոր դիրիժոր), Վաչե Սաղաթելյա՞նը (ՀԽՍՀ գիտությունների վաստակավոր գործիչ), Մարգարիտ Պողոսյա՞նը (լեզվաբան, Երեւանի քաղաքային խորհրդի պատգամավոր): Եղբայրս՝ Բենիամին Մարգարյանը (ՀՀ ԳԱ ակադեմիկոս), որն իր կյանքն ապրեց... այլ գալակտիկաներում, մինչեւ որ նրանց «կնքեցին» իր անունով՝ «Մարգարյանի գալակտիկաներ»: Ցավոք, այս պահին հնարավոր չէ հիշել բոլորին, քանզի նրանք շատ են, որոնց անպայման չեն վրիպի պատմությունը եւ ժողովրդի հիշողությունը»:

Ի դեպ, այս ավանից է նաեւ Ռուսաստանի ներկայիս արտգործնախարար Սերգեյ Լավրովի պապը՝ հայտնի Քալանթարովների գերդաստանից: Գաբրիել Քալանթարովը Թիֆլիսի դումայի անդամ է եղել, իսկ որդին՝ Վիկտորը, անցած դարի 80-ականներին խորհրդային մաքսային ծառայության պետի տեղակալը:

Մեզ համար բացահայտում էր Հայաստանի ժողովրդական դերասանուհի, Հանրային հեռուստատեսության գլխավոր հաղորդավարուհի Նառա Շլեպչյանի ծնունդով Շահումյանից լինելու փաստը, ում տունն առայսօր պահպանվում է ավանում: Նաեւ Գուրգեն Ադամյանի՝ Ալեքսանդր ֆոն Հումբոլդի անվան ֆոնդի թոշակառու գիտնականի, Սարգիս Քամալյանի, ում բանասիրական ու բանահյուսական հարուստ ժառանգությունը պահպանվում է Երեւանի Չարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարանում ու Երեւանի Մ.Մաշտոցի անվան Մատենադարանում: Շահումյանից էր նաեւ աշխարհահռչակ ֆուտբոլիստ Խորեն Հովհաննիսյանի մայրը՝ լուսահոգի Վարսենիկ Հովհաննիսյանը, ով սպորտային մարմնամարզության Հայաստանի բազմակի չեմպիոնուհի էր, ԽՍՀՄ առաջնությունների մրցանակակիր:

Ու էլի շատ ու շատ տարբեր ոլորտների երեւելիներ, որոնցից յուրաքանչյուրն արժանի է հիշատակման, ինչպես կյանքի օրոք, այնպես էլ՝ հետմահու ու ոչ միայն նրանց ճանաչողների եւ հիշողների, այլեւ ու հատկապես նոր սերնդի համար: Եվ իսկապես, զարմանալիորեն այս փոքրիկ ավանից հայտնիների թիվը ոչ մի կերպ չի զիջում խոշոր քաղաքներին: Ծագումով Շահումյանից է նաեւ գնդապետ Էդուարդ Սանդրուկյանը, ով երկար տարիներ աշխատել է Թբիլիսիի, ապա նաեւ ՌԴ ՆԳՆ ոստիկանության տրանսպորտի գլխավոր վարչության պետի տեղակալ:

Լույս իջնի Ալեքսանդր Սիրունյանի ու Շահումյանում ծնված բոլոր հանճարների ու անվանիների հոգիներին... Դեռ երկար արարեն նրանք, ովքեր ողջ են, ու թող Շահումյանը շարունակի համալրել հայտնիների իր փաղանգը, այժմ արդեն շնորհիվ ավանի երկու հայոց դարբնոցների՝ 2022 թ.-ին իր 100-ամյակը նշող թիվ 1 (տնօրեն՝ Արտուշ Ուռումյան) եւ վարժապետ Վահան Միրաքյանի նախկին տանը գործող թիվ 3 (տնօրեն՝ Աիդա Ազատյան) դպրոցների: Իսկ նմաններն արդեն կան ու համոզված եմ, երկար չենք սպասելու, որպեսզի այս նորերի անունները եւս հռչակվեն՝ աշխարհի բարի ու նպաստավոր գործերում:

ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ
ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Լուսանկարը՝ Ստեփան Դեմիրճյանի տիկին Թամարա Սիրունյանի

ՀՐԱՏԱՊ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

ՄԱՐԻ ՄԻԿՈՅԱՆ. «ՊԱՏՎԱՍՏՈՒՄԸ ՈՉ ՄԻԱՅՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ Է, ԱՅԼԵՎ ԲՆԱԿԱՆՈՆ ԿՅԱՆՔ ՎԵՐԱԴԱՌՆԱԼՈՒ ՄԻԱԿ ՀԱՆԱՊԱՐՀԸ»

ԵՐԵԿ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԳՐԱՆՑՎԵԼ Է ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻՑ ՄԱՀՎԱՆ ՌԵԿՈՐԴԱՅԻՆ՝ 62 ԴԵՊՔ, ՊԱՏՎԱՍՏՎԱԾ ՉԵՆ ԵՂԵԼ ԳՐԵԹԵ ԲՈԼՈՐԸ

(Սկիզբը՝ 3-րդ էջում)

Մարին այս իրավիճակը պայմանավորում է իրազեկվածության պակասի ու արմատացած ապատեղեկատվության հետ:

- **Ցավոք, առայսօր բնակչությունը լիարժեք իրազեկված չէ, թե որ պարագայում կարող է զարգանալ անաֆիլիտիկ ռեակցիա,-** *ասում է Մարին:-* **Նույնիսկ մահացած բուժքրոջ պարագայում մենք լսել ենք, որ օգնությունը ուշ է ցուցաբերվել, բայց մինչ օրս ոչ ոք հաստատ չգիտի իրական պատճառը: Չկա պատվաստված մարդկանց մահվան պատճառների պաշտոնական հաղորդագրություն: Ես նկատի չունեմ կոնկրետ թիվը, խոսքը պատճառների մասին է: Անձամբ իմ տվյալներով նրանցից բոլորն ունեցել են ծանր, առողջական լուրջ խնդիրներ, որը բացարձակապես կապ չունի պատվաստման հետ: Այս ամենի մասին պետք է խոսի մասնագետը, շատ խոսի, հանրորեն խոսի: Այնինչ, հանրորեն խոսում են միայն հարեւան-բարեկամները ու բնական է՝ սխալ**

(Շարունակությունը՝ 6-րդ էջում)

COVID - 19

ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՏԱԳՆԱՊԱՀԱՐՈՒՅՑ է

ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՄԲ ՊԱՏՎԱՍՏՎԵԼ է ԵՐԿՐԻ ՁԱՓԱՀԱՍ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ 33,1, ԻՍԿ ՄԵԿ ԴԵՂԱՁԱՓՈՎ՝ 36,6%

Նոյեմբերի 4-ին, Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու նախագահությամբ եւ երկրի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլու մասնակցությամբ, անցկացվեց միջգերատեսչական համակարգող խորհրդի հերթական նիստը, որը քննարկեց համավարակով պայմանավորված իրավիճակը:

Նշվեց, որ վերջին ժամանակներում օրական վարակումների թիվը կտրուկ ավելացել է: Ավելացել է նաեւ մահացությունների թիվը: Ելնելով ստեղծված իրավիճակից՝ խորհուրդը որոշեց կտրուկ ուժեղացնել պատվաստումների գործընթացը, այդ ուղղությամբ իրականացվող քարոզարշավում ներգրավել հնարավորինս շատ լրատվամիջոցներ:

Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին դիմեց կառավարությանը՝ առաջարկելով պատվաստումը պարտադիր դարձնել ռիսկային խմբերի համար, հանրային տարածքներ մուտք գործելու համար պահանջել պատվաստումը հաստատող փաստաթուղթ եւ չպատվաստված անձանց բուժումը դարձնել վճարովի:

- Դիմում եմ լրատվամիջոցներին, որպեսզի ավելի ակտիվ լուսաբանեն այս խնդիրը: Քաղաքացիներին եւս կոչ եմ անում ավելի ակտիվ կերպով պատվաստվել: Ես եւս մեկ անգամ դիմում եմ պատրիարքարանին, որպեսզի եկեղեցին հստակ ցուցում տա եւ իր օրինակով առաջնորդի համայնքին,- նշեց նախագահը:

Վրաստանի հիվանդությունների վերահսկման ազգային կենտրոնի ղեկավար Ամիրան Գամղրելիձեն բնակչությանը կոչ արեց առավել լրջություն եւ պատասխանատվություն ցուցաբերել պատվաստման հարցում:

- Այս ընթացքում երկրում ամբողջությամբ պատվաստվել է 814 851 մարդ, եւ պատվաստվելուց հետո նրանցից միայն 11 403-ն են վարակվել Covid-19-ով: Նշեմ, որ ամբողջությամբ պատվաստվածների շրջանում վարակի մակարդակը 9,87 տոկոսով ցածր է չպատվաստված անձանց թվից:

Հիվանդությունների վերահսկման ազգային կենտրոնի ղեկավարի տեղակալ Պաատա Իմնաձեն, արձագանքելով երկրի նախագահի չպատվաստվածներին վճարովի բուժման անցնելու առաջարկին, նշեց, որ հաշմանդամների վճարովի բուժման գաղափարը չի կարող կյանքի կոչվել, այն կպահանջի օրենսդրական փոփոխություններ:

- Մնացած բոլոր առումներով ես լիովին համաձայն եմ նախագահի հետ,- ասաց Պաատա Իմնաձեն: Նրա խոսքով, կորոնավիրուսից մահացածների 99 տոկոսը պատվաստված չի եղել:

Նիստում Ամիրան Գամղրելիձեն ներկայացրեց նաեւ կորոնավիրուսից մահացության վիճակագրությունը՝ նշելով, որ Covid-19-ից մահացությունը մեկ միլիոն բնակչի հաշվով տարածաշրջանում ամենաբարձրն է Վրաստանում:

Նրա խոսքով, հոկտեմբերի 1-ի տվյալները արտացոլող զեկույցի համաձայն, Վրաստանն այս ցուցանիշով աշխարհի ամենավատ իրավիճակում գտնվող երկրներից է՝ որին նախորդում են Բոսնիա եւ Հերցեգովինան, Հունգարիան, Բուլղարիան, Չեխիան եւ Սլովակիան:

Նշենք, որ միջգերատեսչական համակարգող խորհուրդը դեռեւս ձեռնպահ է մնում պատրադիր պատվաստում ներդնելու, թեեւ ընդգծվեց կորոնավիրուսի դեմ հանձնարարականների եւ կարգավորումների կատարման անհրաժեշտությունն եւ դրանց կատարման վերահսկողության ուժեղացումը:

Խորագիրը պատրաստեց ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍ. ԱՇԽԱՐՀՈՒՄ ՎԱՐԱԿՎԱԾՆԵՐԻ ԹԻՎԸ ՄՈՏԵՆՈՒՄ է 250 ՄԻԼԻՈՆԻՆ

COVID-19-ի հաստատված դեպքերի թիվն աշխարհում հասել է 249 385 608-ի: Կորոնավիրուսի հետազոտական կենտրոնների տվյալների համաձայն, մահացածների թիվը գերազանցել է 5 045 951-ը: Ապաքինվել է 225 867 309 մարդ:

Վարակվածների թվով աշխարհում առաջին տեղում **ԱՄՆ**-ն է, որտեղ կա հաստատված **47 187 256** դեպք: Այստեղ մահացածների թիվը **772 315** է, երկրորդ տեղում **Հնդկաստանն** է, որտեղ հաստատված դեպքերի թիվը հասել է **34 332 407**-ի, մահացածներինը՝ **459 875**-ի:

Վարակվածների թվով հաջորդ տեղում **Բրազիլիան** է: Այստեղ վարակվել է **21 849 137**, մահացել՝ **608 715** մարդ: **Մեծ Բրիտանիայում** կորոնավիրուսով վարակվել է **9 208 219**, վարակի հետեւանքով մահացել՝ **141 395** մարդ: Մեծ Բրիտանիային հաջորդում են Ռուսաստանը, Թուրքիան, Ֆրանսիան, Իրանը, Արգենտինան ու Իսպանիան:

Հայաստանում, ընդհանուր առմամբ, վարակվածների թիվը հասնում է **316 839**-ի, մահացածներինը՝ **6 582**-ի, ապաքինվածներինը՝ **276 865**-ի:

Ադրբեջանում վարակվածների թիվը **539 710** է: Վարակից մահացել է **7 182,** ապաքինվել՝ **501 508** մարդ:

Վրաստանում, վերջին տվյալներով, վարակվել է **743 511,** մահացել՝ **10 300**, ապաքինվել՝ **681 919** մարդ:

*Նոյեմբերի 5-ին կորոնավիրուսով վարակման **5 340** նոր դեպքերից **1 956**-ը Թբիլիսիում է, Աջարիայում՝ **217**, Իմերեթիում՝ **1 059**, Քվեմո Քարթլիում՝ **413**, Շիդա Քարթլիում՝ **446**, Գուրիայում՝ **130**, Սամեգրելո-Զեմո Սվանեթիում՝ **328**, Կախեթիում՝ **492**, Մցխեթա-Մթիանեթիում՝ **109**, Ռաճա-Լեչխումիում եւ Քվեմո Սվանեթիում՝ **71**, Սամցխե-Ջավախեթիում՝ **119**:*

Նոյեմբերի 5-ի տվյալներով մահացել է 62 մարդ:

ՀՐԱՏԱՊ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

ՄԱՐԻ ՄԻԿՈՅԱՆ. «ՊԱՏՎԱՍՏՈՒՄԸ ՈՉ ՄԻԱՅՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ է, ԱՅԼԵՎ ԲՆԱԿԱՆՈՆ ԿՅԱՆՔ ՎԵՐԱԴԱՌՆԱԼՈՒ ՄԻԱԿ ՁԱՆԱՊԱՐՀԸ»

ԵՐԵԿ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԳՐԱՆՑՎԵԼ է ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻՑ ՄԱՀՎԱՆ ՌԵԿՈՐԴԱՅԻՆ՝ 62 ԴԵՊՔ, ՊԱՏՎԱՍՏՎԱԾ ՉԵՆ ԵՂԵԼ ԳՐԵԹԵ ԲՈԼՈՐԸ

(Սկիզբը՝ 5-րդ էջում)

կարծիք ձեւավորում, խոսում պատվաստման, բայց ոչ վարակվելու ծանր հետեւանքներից: Իմ ընտանիքի բոլոր անդամները պատվաստված են ու, որքան էլ մասնագիտությամբ բժիշկ, ես խորհրդակցել եմ այս բնագավառում առավել փորձառու մասնագետի հետ ու համոզվել, որ պատվաստվելու ճիշտ որոշում եմ կայացնում:

Մարին Թբիլիսիի բժշկական պետական համալսարանի շրջանավարտ է: Տասնվեց տարի աշխատում է Թբիլիսիի բուժօգնության ծառայությունում ու համավարակի սկզբից, անտեսանելի թշնամու դեմ պայքարի առաջին շարքերում է ե'ւ բժշկության, ե'ւ հասարակական գործունեության տեսանկյուից: Որպես «Generation» հասարակական կազմակերպության գործադիր տնօրեն, մեկ անգամ չէ, որ հանդես է եկել վրացական մամուլում, հեռուստատեսությամբ, համացանցում կորոնավիրուսի հետ կապված հարցերը պարզաբանելու նպատակով բազմիցս օնլայն քննարկումներ ու հանդիպումներ է կազմակերպել միջազգային փորձագետների հետ:

- Երկու տարի է, Վրաստանում մոլեգնում է համավարակը,- *ասում է նա:-* **Այս ամբողջ ընթացքում ես երբեք չեմ հուսահատվել, մանավանդ, երբ հաջողվել է օգնել բուժառուին, առավել եմ թափ առել: Ինքս էլ վարակվել եմ, անցել այս չարիքի միջով: Ունեցել եմ ընկերների, մտերիմների կորուստ... ինչպես եւ յուրաքանչյուրը մեզանից: Այսօր պատվաստումից բացի, այլընտրանք չունենք: Այո', ե'ւ պատվաստվածը, ե'ւ չպատվաստվածը կարող են վարակվել ու վարակել, բայց կա շատ կարեւոր հանգամանք. բացի նրանից, որ պատվաստվածի վարակման ու հետեւաբար վարակելու հավանականությունը անհամեմատ քիչ է, նվազագույնի է հասցվում մահվան ելքը: Ու պատվաստումը, եթե ոչ՝ 100, ապա 80 տոկոսով, հաստատ, պաշտպանում է մեզ ու մեր հարազատներին: Օրինակները շատ են, ես անձամբ առնչվել ու առնչվում եմ գրեթե ամեն օր:**

Ուստի, գործադրել է պետք հնարավոր լծակներ: Օրինակ՝ լավ կլիներ, որ ներդրվեր Եվրոպայում, ԱՄՆ-ում գործող մոդելը, ըստ որի, պատվաստումները չեն իրականացվում միայն կլինիկաներում: Այստեղ պատվաստվում են միայն ծանր քրոնիկ հիվանդները, մինչդեռ առողջները՝ լողափերում, օդանավակայաններում, առեւտրի կենտրոններում, կինոթատրոններում, մետրոյում ու դեղատներում: Շատերին եմ ճանաչում Վրաստանում, որոնք պատվաստվել են հենց ավտոբուսներում՝ հարմարավետությունից ելնելով, *- ասում է Մարին:*

Վրաստանում չի իրականացվի պարտադիր պատվաստում. մեկ անգամ չէ, որ երկրի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին հանդես է եկել այս հայտարարությամբ: Այդուհանդերձ, վարակաբանները պնդում են, որ երկրում իրավիճակը կկարգավորվի միայն բնակչության առնվազն 70 տոկոսի պատվաստման դեպքում, թեեւ այս պահին պատվաստված է միայն 33, 1 տոկոսը՝ հասարակությունը բաժանելով պատվաստված-չպատվաստվածների: Պատվաստվածները տուժում են չպատվաստվածների պատճառով, իսկ չպատվաստվածները պնդում են, որ խախտվում են իրենց սահմանադրական իրավունքներն ու իրենք ենթարկվում են խտրականության, երբ օրինակ, սենդի որոշ կետեր պահանջում են պատվաստման անձնագիր եւ/կամ միայն պատվաստվածների համար զեղչեր սահմանում:

- Անձամբ ինքս դեմ եմ պարտադիր պատվաստմանը,- *ասում է Մարին:-* **Մենք պետք է օգնենք քաղաքացուն գալ որոշման՝ նրա հետ զրուցելով, թեկուզ դռնեդուռ թակելով ու իրազեկելով, ընդհուպ՝ փաստացի ու թղթային ապացույցներով: Մարդուն պետք է բերել այդ համոզման: Ես հաճախ խոսում եմ իմ արտասահմանյան ընկերների հետ: Օրինակ, Ֆրանսիայում կան քաղաքներ ու ավաններ, որոնք վերադարձել են կյանքի նորմալ հուն, ու մահացության ցուցանիշը զրո է, վարակվածությունը՝ նվազագույն, որովհետեւ բոլորը պատվաստվել են Իսկ ի՞նչ է կատարվում մեր դպրոցներում, եթե նույնիսկ պատվաստված է ուսուցչական անձնակազմը, ապա դպրոց եկող երեխաների ծնողները՝ ոչ: Ուստի ունենք այն, ինչ ունենք: Փակվող-բացվող կամ կիսափակ դասարաններ, օնլայն-օֆլայն խառնաշփոթ: Մենք պետք է հասկանանք, որ գործ ունենք ինտելեկտուալ ու մուլտիգործառութային հիվանդության հետ, որն անընդհատ մուտացիայի է ենթարկվում, առաջ բերում նոր շտամներ՝ ավելի ու ավելի ախտահարելով ամբողջ օրգանիզմը: Հիվանդությունը չի թուլացել, շղթան չի քանդվել:**

Համավարակի սկզբից առայսօր Վրաստանում կորոնավիրուսից 10 հազարից ավելի մարդ է մահացել ու միայն 62-ը՝ երեկ: Մահացածների 90 տոկոսից ավելին պատվաստված չի եղել:

- Ես մշտապես կրկնում եմ՝ իմունիտետն ամբողջությամբ սկսում է գործել պատվաստման երկրորդ դեղաչափի երրորդ շաբաթվա ընթացքում, ուստի առավելագույն զգուշություն է հարկավոր հատկապես մինչեւ այդ շաբաթը: Այդուհանդերձ, գիտակցելով, որ պատվաստումը խիստ անձնական է, ու ես իրավունք չունեմ պարտադրել, ասեմ միայն, որ վարակն այլեւս չի հեռանալու, այնպես, ինչպես վարակիչ այլ հիվանդություններ, որոնց հետ ապրում ենք, ու որոնց դեմ վաղուց պատվաստվում: Համարվելով օդակաթիլային՝ այն կարող է դիպչել յուրաքանչյուրին, ցանկացած պահի՝ ուժեղ թե թույլ իմունային համակարգով: Այս ընթացքում գիտե՞ք քանիսն են համոզված եղել, բայց կովիդի ճիրաններն ընկել, հասել վերակենդանացման բաժանմունք ու այնտեղից իրենց մտերիմներին խնդրել պատվաստվել:

21-րդ դարն է, ու ես, կարծում եմ խոսել նրա մասին, որ պատվաստանյութը ստեղծվել է կարճ ժամանակում, հետեւաբար հետազոտված չէ, կամ տարածել այն հերյուրանքները, որ մեզ չիպավորում են, փոխում գենետիկան, առնվազն զավեշտալի է: Դիմակ կրելը, հավաքներից խուսափելը ու մանավանդ, հիվանդության դեպքում մեկուսանալը, վարակի տարածումը կանխարգելելու միջոց ու սոցիալական պատասխանատվություն են, իսկ պատվաստումը՝ այս ամենը լինելուց բացի, նաեւ բնականոն կյանք վերադառնալու միակ ճանապարհը:

Հիշեցնենք, որ Վրաստանում պատվաստումը մեկնարկել է 2021 թվականի մարտի 15-ից: Կորոնավիրուսի համաշխարհային քարտեզի վերջին տվյալներով, ամենից շատ պատվաստված է Պորտուգալիայի բնակչությունը՝ 91,2 տոկոս: Սեպտեմբերի 1-ից հոկտեմբերի 25-ը ընկած ժամանակահատվածում այստեղ գրանցվել է կորոնավարակի 4 429 դեպք՝ 38 մահ, Դանիայում պատվաստված է բնակչության 88 տոկոսը, կրկին նույն ժամանակահատվածում գրանցվել է 5 228 դեպք՝ 20 մահ:

ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՄԱՍՆԱԿՑԵՑ ՄԱԿ-Ի ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ

Նոյեմբերի 1-ին Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանը Գլազգոյում մասնակցեց ՄԱԿ-ի՝ Կլիմայի փոփոխության մասին շրջանակային կոնվենցիայի կողմերի 26-րդ համաժողովի (COP26) բացման արարողությանը:

Գագաթաժողովի մասնակից երկրների ղեկավարներին դիմավորել են Միացյալ Թագավորության վարչապետ Բորիս Ջոնսոնը եւ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Անտոնիո Գուտերեշը: Համաժողովի շրջանակներում, Արմեն Սարգսյանը կարճատեւ զրույց ունեցավ Մեծ Բրիտանիայի վարչապետի, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի, ինչպես նաեւ ԱՄՆ նախագահ Ջո Բայդենի, Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնի, Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելի, Մոնակոյի արքայազն Ալբերտ Երկրորդի, Կատարի էմիր շեյխ Թամիմ Բին Համադ Ալ Թանիի, Եգիպտոսի նախագահ Աբդել Ֆաթթահ Ալ Սիսիի, Սերբիայի նախագահ Ալեքսանդար Վուչիչի, Կիպրոսի նախագահ Նիկոս Անաստասիադիսի, Արգենտինայի նախագահ Ալբերտո Ֆերնանդեսի, Չեռնոգորիայի նախագահ Միլո Ջուկանովիչի, Ղրղզստանի նախագահ Սադիր Ժապարովի, Հնդկաստանի վարչապետ Նարենդրա Մոդիի, Իտալիայի վարչապետ Մարիո Դրագիի, Կանադայի վարչապետ Ջասթին Տրյուդոյի, Ավստրալիայի վարչապետ Սքոթ Մորիսոնի, Լիբանանի վարչապետ Նեժիպ Միքաթիի, Լյուքսեմբուրգի վարչապետ Քսավյե Բեթելի, Շվեդիայի վարչապետ Ստեֆան Լյովենի, Ավստրիայի կանցլեր Ալեքսանդր Շալենբերգի, Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելի հետ:

Նոյեմբերի 2-ին Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանը ելույթ ունեցավ Համաշխարհային առաջնորդների գագաթաժողովին:

ԱՄՆ ՊԵՏՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՓՈԽՏԵՂԱԿԱԼԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Նոյեմբերի 3-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը հանդիպում ունեցավ ԱՄՆ պետքարտուղարի փոխտեղակալ Էրիկա Օլսոնի գլխավորած պատվիրակության հետ:

Հանդիպմանը Հայաստանի վարչապետը բարձր գնահատեց Հայաստանի եւ ԱՄՆ-ի միջեւ հաստատված բարեկամական հարաբերությունները: Նիկոլ Փաշինյանի խոսքով, 2019 թվականից սկսվել է հայ-ամերիկյան ռազմավարական երկխոսությունը, որը միտված է հարաբերությունների հետագա զարգացմանն ու առաջմղմանը: Նիկոլ Փաշինյանը բարձր գնահատեց նաեւ ԱՄՆ դերը ընթացիկ տարվա հունիսին Ադրբեջանից 15 հայ գերիների վերադարձի գործում:

Հանդիպմանը զրուցակիցները քննարկեցին Հարավային Կովկասի տարածաշրջանում տեղի ունեցող գործընթացներին, Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորմանը, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության ջանքերին, Ադրբեջանում պահվող հայ գերիների, պատանդների եւ պահվող այլ անձանց վերադարձի ապահովմանը, Հայաստանում ժողովրդավարական բարեփոխումներին վերաբերող մի շարք հարցեր:

Նշենք, որ Երեւանում գտնվելու ընթացքում պետքարտուղարի փոխտեղակալ Օլսոնը նոյեմբերի 2-4-ը մասնակցեց հարավկովկասյան տարածաշրջանի ԱՄՆ առաքելությունների ղեկավարների համաժողովին:

ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ. «ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԸ ԵՏ ԵՆ ԸՆԿԵԼ ՄԵԿ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՉԱՓՈՎ»

Հայաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ Ժաննա Անդրեասյանը (արմատներով Վրաստանի Բոլնիս-Խաչեն գյուղից, խմբ.) ***նշեց, որ այս երկրների մեծ մասում դպրոցները փակ են եղել 200-250 օր, եւ շատերը դեռ փակ էլ մնում են:***

- Տարեսկզբին կանխատեսում կար, որ ֆունկցիոնալ անգրագիտության աճը կկազմի 10 տոկոս, բայց հետազոտությունները ցույց են տալիս, որ բացասական ազդեցությունն ավելի մեծ է՝ 17 տոկոս, քանի որ մինչքովիդյան ժամանակաշրջանում թերուսության մակարդակն այս երկրներում եղել է 53 տոկոս: Մեր երկրում դպրոցների փակման ցուցանիշը շատ ավելի ցածր էր՝ 12 շաբաթ: Մեր երեխաները ետ են ընկել մեկ կիսամյակի չափ՝ ի տարբերություն շատ երկրների, որտեղ մեկուկես տարվա բաց է գոյացել: Բայց սա էլ շատ լուրջ խնդիր է՝ հատկապես գումարվելով կրթական համակարգի եղած խնդիրներին,- ասաց Ժաննա Անդրեասյանը եւ հավելեց, որ համավարակը միայն առողջապահական խնդիր չէ:

- Ձերծ պահենք մեր երեխաներին վատթար իրավիճակից. առողջապահական իրավիճակին աջակցելու մեզնից յուրաքանչյուրի քայլը դառնում է նաեւ կրթության իրավունքն ապահովելու քայլ,- հավելեց փոխնախարարը:

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐՔԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԿԱՏԱՐԻ ՄԻ ՔԱՆԻ ԵՐԿՐՆԵՐԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկէ Հայոց Կաթողիկոս -Պատրիարքը կշարունակի կատարել Հայաստանի, Վրաստանի, Ռուսաստանի եւ Արեւելյան Եվրոպայի կաթողիկէ հայոց Առաջնորդի պարտականությունները՝ մինչեւ Եպիսկոպոսաց Սինոդոսի հաջորդ գումարումը:

Այս մասին տեղեկացնում է Հայաստանի, Վրաստանի, Ռուսաստանի եւ Արեւելյան Եվրոպայի կաթողիկէ Առաջնորդությունը:

Հայաստանի, Վրաստանի, Ռուսաստանի եւ Արեւելյան Եվրոպայի հայ կաթողիկէների Առաջնորդ Տեր Ռաֆայել արքեպսկոպոս Մինասյանը 2021թ. սեպտեմբերի 23-ին Հռոմում կայացած Հայ Կաթողիկէ Սինոդոսի ընտրությունների արդյունքում ընտրվեց Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկէ Հայոց Կաթողիկոս-Պատրիարք՝ Ռաֆայել Պետրոս ԻԱ, բայց Պատրիարք-Կաթողիկոսի պարտականություններին զուգահեռ, Հռոմի Սուրբ Աթոռի տնօրինությամբ, կշարունակի կատարել Հայաստանի, Վրաստանի, Ռուսաստանի եւ Արեւելյան Եվրոպայի կաթողիկէ հայոց Առաջնորդի պարտականությունները՝ մինչեւ Եպիսկոպոսաց Սինոդոսի հաջորդ գումարումը նոր Առաջնորդ եպիսկոպոս ընտրելու համար:

ԵՐԵՎԱՆՈՒՄ ԲԱՑՎԵՑ «ԲԱՑԱՀԱՅՏԵՆՔ ՋԱՎԱԽՔԸ» ԽՈՐԱԳՐՈՎ ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԸ

Նոյեմբերի 2-10-ը Երեւանի կենտրոնում կգործի Վրաստանի տարածաշրջանը ներկայացնող հայահոծ Ջավախքյան թեմայով ցուցահանդես՝ յուրահատուկ գույներով, համուհոտով ու ավանդույթներով:

Ցուցահանդեսը կգործի Մելիք Ադամյան 2/2 հասցեում գտնվող ՀԲԸՄ Հայաստան դահլիճում: «Բացահայտենք Ջավախքը» խորագրով լուսանկարչական ցուցահանդեսը կցուցադրի համանուն լուսանկարչական արշավի մասնակիցների Ջավախքյան բնապատկերներն ու կոլորիտը ներկայացնող լուսանկարները:

Նշենք, որ «Ջավախքին աջակցություն» հիմնադրամը ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության, Հայ լուսանկարիչների ազգային ասոցիացիայի եւ Հայկական բարեգործական ընդհանուր միության հետ համագործակցությամբ օգոստոսի 27-29-ը կազմակերպել էր «Բացահայտենք Ջավախքը» խորագրով եռօրյա լուսանկարչական արշավ: Ծրագրի մասնակիցները՝ հայ եւ վրացի լուսանկարիչներ Հայաստանից եւ Վրաստանից, երեք օր շարունակ եղել են երկրամասի տարբեր շրջաններում, գյուղերում ու քաղաքներում, ծանոթացել գյուղական բնակավայրերի կյանքին ու բարքերին եւ լուսանկարել են այն ամենը, ինչն իրենց զարմացրել, հիացրել ու տպավորել է:

Ցուցահանդեսը բացվել է հանդիսավոր պայմաններում, ներկա հյուրերի թվում է եղել նաեւ Սփյուռքի գլխավոր հանձնակատար Զարեհ Սինանյանը:

ՄԻՆՉԵՎ ՏԱՐԵՎԵՐՋ ԳՆԱՀԸ ԿՊԱՀՊԱՆՎԻ

Հայաստանի Կենտրոնական բանկի խորհրդի գնահատմամբ, մինչեւ տարեվերջ 12-ամսյա գնաճը կպահպանվի բարձր մակարդակում, այնուհետեւ 2022 թվականին կմոտենա նպատակային 4 տոկոս ցուցանիշին եւ միջնաժամկետ հատվածում կկայունանա դրա շուրջ:

Հայաստանի ԿԲ նախագահ Մարտին Գալստյանի խոսքով, 2021 թվականի նոյեմբերի 2-ի նիստում ԿԲ խորհուրդը որոշել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը թողնել անփոփոխ՝ սահմանելով 7,25 տոկոս: 2021թ. սեպտեմբերին արձանագրվել է 0,1 տոկոս գնանկում, նախորդ տարվա նույն ամսվա 0,2 տոկոս գնանկման դիմաց, որի պարագայում 12-ամսյա գնաճը մնացել է անփոփոխ՝ ամսվա վերջին կազմելով 8,9 տոկոս: 12-ամսյա բնականոն գնաճը եւս սեպտեմբերին ցուցաբերել է կայուն վարքագիծ՝ պահպանվելով 8,0 տոկոսի մակարդակում:

Չնայած արտաքին հատվածում եւ Հայաստանի տնտեսությունում գնաճային ազդեցությունների պահպանմանը, ԿԲ Խորհուրդը գնահատում է, որ նախորդ տարեվերջից դրամավարկային պայմանների՝ ապագային միտված եւ հետեւողական խստացումը բավարար ազդեցություն է ունենում առաջանցիկ պահանջարկի կարգավորման, գնաճի զսպման եւ միջնաժամկետում գնաճի նպատակի ապահովման ուղղությամբ:

ՀՐԱԶԴԱՆԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ

Հրազդանն ընտրվել է Հայաստանի 2022 թվականի երիտասարդական մայրաքաղաք:

Մրցույթի կազմկոմիտեն ամփոփեց արդյունքները փորձագիտական գնահատման եւ կարճ հաղորդագրությամբ (SMS) քվեարկության արդյունքում:

Նշենք, որ հայտ են ներկայացրել Հրազդանը, Արմավիրը, Եղեգնաձորն ու Ալավերդին:

2021 թվականին երկրի երիտասարդական մայրաքաղաք էր ընտրվել Կապանը, որտեղ հյուրընկալվել են ԱՊՀ մի շարք միջոցառումներ:

ԿԿԱՌՈՒՑՎԻ ԽՈՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՖՈՒՏԲՈԼԻ ԴՊՐՈՑ

Հայաստանի կառավարության որոշմամբ, Երեւանի Կենտրոն Ա.Մանուկյան փողոց 11 հասցեում գտնվող հողամասը նախատեսվում է նվիրաբերել «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» ՀԿ-ին: Ֆեդերացիայի ներկայացրած գործունեության ծրագրի համաձայն, նշված հողամասում առաջարկում է կառուցել անվանի ֆուտբոլիստ Խորեն Հովհաննիսյանի անվան ֆուտբոլի դպրոց:

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 10 տարվա ընթացքում՝ կատարելով 760 000 եվրոյի ներդրում, որից 160 000 եվրոն կազմակերպության միջոցների հաշվին, իսկ 600 000 եվրոն՝ եվրոպական ֆուտբոլային ասոցիացիաների միության կողմից:

ԱՃԵԼ Է ՀԱՆՁԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹԻՎԸ

Հայաստանում գրանցված հանցագործությունների ընդհանուր թիվը աճել է 6,1 տոկոսով կամ 1201 դեպքով, ինչը գլխավորապես պայմանավորված է խարդախությունների, գողությունների եւ ճանապարհային երթեւեկության կանոնները խախտելու դեպքերի ավելացմամբ:

2020 թվականի 9 ամիսներին կազմել է 19 662, իսկ 2021 թվականին 9 ամիսներին՝ 20 863 դեպք, որոնց մեջ հիմնական բաժինն ընկնում է ոչ մեծ եւ միջին ծանրության հանցագործություններին:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՆՈՅԵՄԲԵՐ

13.11.2021 Հիշատակ Սուրբ Անդրեաս եւ Սուրբ Փիլիպպոս առաքյալների

Սուրբ Անդրեաս առաքյալը, մինչ Հիսուս Քրիստոսին հետեւելը, նախապես եղել է Հովհաննես Մկրտչի աշակերտը: Նա Պետրոս առաքյալի եղբայրն ու արհեստակիցն էր: Փրկչի համբարձումից եւ Սուրբ Հոգու էջքից հետո, Անդրեաս առաքյալը քարոզել է Հյուսիսային Հունաստանում եւ սկյութների երկրում: Նահատակվել է Պատրաս քաղաքում:

Սուրբ Փիլիպպոս առաքյալը Հրեաստանի Բեթսայիդայից էր, Պետրոս առաքյալի հայրենակիցը: Հավանաբար, նա էլ է նախապես եղել Հովհաննես Մկրտչի աշակերտը: Քարոզել է Փոքր Ասիայում եւ նահատակվել Հերապոլիս քաղաքում՝ խաչվելով:

Հայ Առաքելական եկեղեցին Սուրբ Անդրեաս եւ Սուրբ Փիլիպպոս առաքյալների հիշատակը տոնում է Սուրբ Խաչի 9-րդ կիրակիին հաջորդող շաբաթ օրը:

ՃԱՆԱՉՈՒՄ

ԸՍՏ ԲՐԻՏԱՆԱԿԱՆ Wanderlust ԱՄՍԱԳՐԻ՝ ԹԲԻԼԻՍԻՆ ԱՄԵՆԱՑԱՆԿԱԼԻ ՀՅՈՒՐԸՆԿԱԼ ՔԱՂԱՔ

Ինչպես հայտարարեց Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեն, Բրիտանական հեղինակավոր ամսագրերից մեկը՝ Wanderlust-ը, Թբիլիսին անվանել է որպես ամենացանկալի հյուրընկալ քաղաքը:

Վրաստանի մայրաքաղաքն այս կոչմանն արժանացել է ամենամյա մրցանակաբաշխության՝ Wanderlust Travel Awards-ի շրջանակներում: Թբիլիսին, պորտուգալական Լիսաբոնի եւ իսպանական Սեւիլիայի հետ, ճանաչվել է Մեծ Բրիտանիայից ոչ հեռու գտնվող լավագույն զբոսաշրջային ուղղություններից մեկը:

- Սա եւս մեկ անգամ ընդգծում է մայրաքաղաքի զբոսաշրջային բազմազանությունը եւ ներկայացնում Թբիլիսիի քաղաքային, զբոսաշրջային ներուժը՝ միջազգային ճանապարհորդների եւ զբոսաշրջիկների համար,- ասաց Կախա Կալաձեն:

ԲՈՆՑՔԱՄԱՐՏ

ՎՐԱՍՏԱՆՑԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆՑԻ ՄԱՐԶԻԿՆԵՐԸ ՎԵՐԱԴԱՌՆՈՒՄ ԵՆ ՄԵԴԱԼՆԵՐՈՎ

Սերբիայի Սարաեւո քաղաքում եզրագծին է մոտենում բռնցքամարտի աշխարհի առաջնությունը:

Մրցաշարում Վրաստանի բռնցքամարտիկներն իրենց ակտիվում գրանցել են երկու բրոնզե մեդալ:

Վրաստանը ներկայացնող ռուսաբավցի Լաշա Գուրուլին (67 կգ քաշային կարգ) եւ թբիլիսցի Սախիլ Ալախվերդովը (48կգ քաշային կարգ) արժանացան բրոնզե մեդալների:

Հայաստանի թիմը իր գանձարկղում մեկ բրոնզե մեդալին կարող է ավելացնել առնվազն արծաթե, լավագույն դեպքում՝ ոսկե մեդալ:

63,5 կգ քաշային կարգով բրնզե մեդալի արժանացավ Հայաստանի հավաքականի անդամ, գյումրեցի Հովհաննես Բաչկովը: Իսկ նրա թիմակից եւ համաքաղաքացի Դավիթ Չալոյանը 92+ կգ քաշային կարգում հանդես կգա առաջնության եզրափակիչ փուլում, որը տեղի ունեցավ երեկ, ուշ երեկոյան:

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ

«ՍՈՎՈՐԻՐ ԵՎ ԱՇԽԱՏԻՐ» ՔԱՂԱՔԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՆՈՐ ՓՈՒԼԸ



Սկսվել է «Սովորիր եւ աշխատիր» մունիցիպալ ծրագրի նոր փուլը եւ մասնակցել ցանկացողների գրանցումը: Ծրագրի նպատակն է Թբիլիսիում բնակվող քաղաքացիների մասնագիտական վերապատրաստման ու զբաղվածության խթանումը:

Ըստ Թբիլիսիի քաղաքապետարանի, ծրագիրն իրականացվում է չորս պետական արհեստագործական քոլեջների հետ համագործակցությամբ եւ քաղաքացիներին առաջարկում է կարճաժամկետ մասնագիտական դասընթացներ շինարարության, ծառայությունների, արտադրության, դիզայնի, սննդի, տրանսպորտի, անասնաբուժության, ֆինանսների, ճարտարագիտության եւ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտներում:

Ծրագրի գործընկեր քոլեջներն են «Իկարոսը», «Մերմիսը», «Սպեկտրը», Գլդանիի մասնագիտական ուսուցման կենտրոնը:

Հետաքրքրված քաղաքացիների էլեկտրոնային գրանցումը սկսվում է նոյեմբերի 1-ից եւ կշարունակվի մինչեւ նոյեմբերի 15-ը, Թբիլիսիի քաղաքապետարանի կայքում՝ www.Tbilisi.gov.ge եւ www.dasakmdi.ge էլեկտրոնային պորտալում: Ուսումնական գործընթացը կմեկնարկի նոյեմբերի 20-ին:

Ծրագրին մասնակցելու նախադրյալներն են՝ գրանցումը Թբիլիսիում, տարիքը՝ 18 եւ ավելի տարեկան:

«Ծրագիրը գործում է 2018 թվականից, որի շրջանակներում 2018-2020 թվականներին վերապատրաստվել է ավելի քան 4500 քաղաքացի: Նրանցից ավելի քան 3400-ն արդեն զբաղված են (զբաղվածության մակարդակը 75%): Մինչեւ տարեվերջ այս ծրագրում կներգրավվի մինչեւ 1000 քաղաքացի»,- հայտնել են Թբիլիսիի քաղաքապետարանից:

ԽԱՉԲԱՌ



ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Հայաստանի առաջին Հանրապետության ռազմական, պետական գործիչ, Լեռնահայաստանի հանրապետության առաջնորդ Նժդեհի անունը: 4.Ամերիկացի գրող Թ.Դրայզերի կենսագրական վեպը: 9.Նար-Դոսի գրական հերոսուհի: 10.Բերքատու, բարեբեր: 13.Անգլիացի նշանավոր արձակագիր: 14.Ձայնարկություն: 15.... արբանյակը Լուսինն է: 16.«..., նորից վառիր հուրդ հայրենյաց» (ժող.երգ): 18.Դավանանք: 20.Կար..., ճր...: 21.Վերջածանց: 23.Հայկական ուտեստ, որի գլխավոր բաղադրիչը սիսեռն է: 24.Արեգակնային համակարգի մոլորակ: 28.Հենրիկ Մալյանի ֆիլմերից: 29.Աբուլ, Սիս, Մասիս: 30.Ֆրանսիացի գրող, հայկական արմատներով ... Թրուայա: 31.Ասիական պետություն: 32.Թատրոնի եւ կինոյի դերասան ... Ջանիբեկյան: 34.Քաղաք Ֆրանսիայում: 35.Մաշտոցյան այբուբենի զինվոր: 36.«Նադիր ...ը զորք հավաքեց» (Հովհ,Թումանյան): 39.Փոխաբերական դարձվածք՝ «... փուշ հանել»: 41.Երկրաչափական մարմին: 42.Հարավսլավական ժողովուրդ: 44.Առյուծի ձագը: 45.Որեւէ մարդկանց կամ առարկաների հերթականություն: 46.Օժանդակ բայ: 47.Հնագույն զենք: 48.Ելիզավետան ընտանեկան մթնոլորտում: 52.Գործվածքի տեսակ: 56.Մեքենան վարողը: 57.Վրացական ֆիլմ: 58.Անօդաչու թռչող սարք (հապ.): 59.Ալադինի լամպի մեջ:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 2.«Ոսկե գեղմի» Յասոնի նավը: 3.Թբիլիսահայ լուսահոգի երգիչ, Սայաթ-Նովայի երգերի անզուգական կատարող Զաքարյանը: 4.Ասիական խոշոր պետություն: 5.Անիծված, ստոր, նվաստ: 6.Վրաց հայտնի երգչուհի ... Բրեգվաձե: 7.Հայկական հայտնի գինի: 8.Աքեմենյան Պարսկաստանի արքա: 11.Մազ, հեր, գիսակ: 12.Խորհրդային մուլտֆիլմ «..., սպասիր»: 17.Յուպիտեր մոլորակը՝ հայերեն: 18.Թբիլիսիի մոտակայքում գտնվող ամառնոցային վայր: 19.«Չկա քիզի ...» (Սայաթ-Նովա): 22.Հայ հանճարեղ պոետ Եղիշե Աբգարի Սողոմոնյանը: 25.Ռազմի աստվածը հունական դիցաբանության մեջ: 26.Ժամանակի միավոր: 27.Ավ.Իսահակյանի երկերից «...ի սերը»: 33.Հայկական կարմիրը: 35.Ուսուցչապետ:37.Փոքրիկ հուշեր: 38.Թբիլիսիի ներկայիս քաղաքապետ, նախկին ֆուտբոլիստ: 39.Ուժերը չափել միմյանց հետ: 40.Սարահարթ Իրանում: 42.Հեղուկ մետաղ: 43.Մեծ Հայքի Արշակունյաց թագավորներից: 49.Կենդանու յուղը: 50.Ճիճու, զեռուն: 51.Խավար, անտեսանելի: 52.Արի, անվախ: 53.Ամերիկահայ երգչուհի ... Քրիստի: 54.Մածնաջուր: 55.Խոնավ, չչորացած:

Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 7.Պաշտել: 8.Անուժ: 10.Լինո: 11.Ագա: 13.Աբուջա: 15.Կրկնել: 16.Փտում: 17.Լոտո: 19.Գիտակ: 23.Պատրաստ: 26.Սաշա: 27.Մետրո: 28.Տաշեղ: 29.Անիմա: 32.Դիոդ: 33.Մոզդոկ: 36.Իդա: 37.Վասն: 39.Լինց: 40.Սնար: 42.Կոթ: 43.Իստակ: 44.Նապո: 45.Լիլո: 46.Ունիա: 47.Դոն: 48.Նենեց: 49.Մուտի:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Խառատ: 2.Կտրում: 3.Ըլլալ: 4.Սանկտ: 5.Էժան: 6.Գթալ: 9.Նորոգ: 12.Գեղաշեն: 14.Բուլատ: 18.Կրոն: 20.Իսակով: 21.Տաշ: 22.Կաղ: 23.Պենիցիլին: 24.Տրադիցիոն: 25.Սումո: 30.Իմաստուն: 31.Ազգակից: 34.Կակաղու: 35.Էնթոնի: 38.Սոպոտ: 41.Նանե:

Գլխավոր խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ
Գլխ. խմբագրի տեղակալ՝ ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ
Համարի պատասխանատու՝ ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ
Համակարգչային ձեւավորումը՝ ՏԻԳՐԱՆ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

ՀՅԵՂԵՈ ՄՈՆԱՑՅԱՐՄՈ: ԹԲԻԼԻՍԻ 0105, Գ.ԱԹՈՆԵԼԻՆ ՓՈՂՈՑ 5.
Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105 Գ.Աթոնելի փ. 5
ՏԵԼ. ՀԵՌ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge E-mail: vrastan.press@gmail.com
Գրանցման վկայական № 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

«ՎՐԱՍՏԱՆԻ» ԹԲԻԼԻՍԻ, ՎԱՀԱՐՇՅԵԼՈՎ
"VRASTAN"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445